

ՊԱՏՆՈՐԻԱԳՐՈՒԹԻՒՆ

|                 |    |    |
|-----------------|----|----|
| Պոչխարիոյ համար | 12 | Պր |
| Տարեկան         | 6  | "  |
| Վեցամսեայ       | 15 | "  |
| Վեցամսեայ       | 8  | "  |

|                 |      |     |
|-----------------|------|-----|
| Սակրիկայի համար | 3    | ՏՊր |
| Տարեկան         | 1.50 | "   |

Ծանուցանել տողը ասու թիւ երեսիկ համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիւն է. երեք տեղ անցի անգլալեզու համար 20 0/0 զեղչ կը լայն

Վառեայի համար մինչ 40 սանթիւն

# ՇՈՒԲԱԿ

ՄԱՍԻՆԻԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Նախկին Գրական Պրեսի  
հանրապետական հաս-  
ցիկն

Редакция на ответных  
„Шаржумъ“  
Варна

Redaction du journal  
„Charjourn“  
Varna (Bulgarie)

Արտատպագրի համար  
մեկի  
( 20 ՍԱՆԹԻՄ )  
Պոչխարիոյ համար  
մեկի  
( 15 ՍԱՆԹԻՄ )

Գրութիւնք և չիւ սրտի

ՇՈՒԲԱԿԻ ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՐԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԵ

## ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐ— ԾԻՆ ՇՈՒՐՁԸ

Մենք ինկատի ունենալով մեր գարոցներու անկերպարան վիճակը և խոշոր պակասութիւնները ստիպուած ենք նորէն կանգ առնել այս հարցի առջեւ:

Հայերը եւրոպայի մէջ քաղաքակրթութեան ընդունակ ցիւղի մը համարը կը վայելեն. Եթէ իրերու գրութիւնը այսպէս երկարատեւ շարունակուի մենք պիտի դժկամակէինք նոյն բարի համբար տալ նաեւ Բուլղարահային... իսկ առանց քաղաքակրթութեան նա դատապարտուած է բարոյական ու տնտեսական քայքայման ու փճացման:

Գաղաքակրթութիւնը պէտք է զարգանայ ինքնուրոյն և ազգային հողի վրայ, այլապէս նա կըլլայ մոզոմոզոններու համար ալլասերում ու փոխան բարիքի կը ծնի չարիք:

Բուլղարահայր ինչպէս կարող է իրեն համար ինքնուրոյն քաղաքակրթութեան ճանապարհ հարթել. Հարցին պատասխանը պարզ է և շատ որոշ—միայն և միմիայն ոյժ տալով իր գարոցներուն, որոնք, կը կրկնենք, այսօր կը գտնուին բարեխոնական խառնակ գրութեան մէջ:

Հոն չկայ կանոնաւոր պիւտեճէ մը, ուստի չկայ նաեւ ուսուցիչներու կանոնաւոր վճարում. Այնպէս որ ուսուցիչ մը համար անկարելի է—որքան ալ նա ունենայ բարի ցանկութիւններ—իր ամբողջ մտածողութեամբ կեդրոնանալ գարոցին վրայ և ոգեւորութեամբ առաջ տանիլ կրթական գործը. Ընդհակառակը նա հոգաբարձուական վէճերու մէջ կ'սպառէ իր ոյժին կէսը, միւս կէսն ալ տնական ու անձնական պիտոյքներու հոգեբով. Իսկ զգարոցին համար կը մնայ զէքս ոյժ. Մինչդեռ օգտակար գառնալու համար մանաւանդ բուլղարահայ գարոցի մը մէջ պէտք էր նա զինուած ըլլար կրկնապատիկ

ոյժերով, որովհետեւ այստեղ տըղաքը զուրկ ընտանեկան ամէնատարրական կրթութենէ բոլորովին վայրենացած վիճակի մէջ կը գտնուին. Ընտանեկան կըրթութիւնը ըսինք. Մեր ծնողները որքան կը մեղանչեն իրենց էն սրբազան պարտականութեանց դէմ. Մտիկ ըրէք Ռուսի խօսքը. «ո՛վ որ իր զաւակները չի խնամեր և փողոցները կը ձգէ որ վայրենանան արժանի չէ ծնող կոչուելու և իրաւունք չունի երախաներ լոյս աշխարհ բերելու, կըսէ մեծախորհուրդ փիլիսոփան:

Ընտանեկան կրթութիւնը հիմքն է, որու վրայ գարոցը պիտի շինէ. Մեր գարոցներու մէջ կը պակսի այդ հիմքը, ասկէ դատմեր ծնողները ամէն րոպէ պատրաստ են գարոցի գործերուն մէջ անտեղի միջամտութեամբ փլցնել նաեւ ուսուցչին շինածը: Սա արդէն աններելի մեղք մըն է՝ գործուած իր սեփական զաւակին դէմ:

Մեր գարոցներուն մէջ չկայ վարչութիւն, չկայ հսկողութիւն, չկայ հաշիւ տուող և պահանջող, չկայ վերջապէս գարոցին համար խորհող մարմին մը. Արդե՛ր ինք. Արդե՛ր վերի յիշուած բարեխոնական խառնակ գրութիւնն է, ամէն անգամ ուսուցիչներ կը փոխուին, լաւ ոյժերը կը հեռանան, օրը անգամ մը ծրագիրներ կը պատրաստուին և այսպէս գարոցին կը տրուի մահացու հարուած, որու հետ նաեւ Բուլղարահայր քաղաքակրթութեան և յառաջդիմութեան գործին. Մարդու սրտէն արիւն կ'երթայ, երբ նա կը տեսնէ սեւ և իմաստուն աչքերով հայ երախաներ՝ յանձնուած ճակատագրին և ձգուած տգիտութեան մէջ:

Չկա՞ն միջոցներ այս թերութիւնները վերցնելու համար. Գոնէ մեծաւ մասամբ կարելի է զանոնք վերցնել, երբ ունենանք գարոցներու զարգացման նախաձեռնողի և կամքի տէր հոգաբարձութիւններ ու պարտա-

ճանաչ ազգային պաշտօնեաներ. Մեր շօշափած թերութիւններէն զերծ չեն նաեւ Վառնայի ազգ. գարոցները և Վառնան պիտի ընտրէ այս կիրակի նոր հոգաբարձութիւն. Բայտ պետական օրէնքի ընտրելու և ընտրուելու իրաւունք ունին միայն տեղացի Հայերը. Իրաւունք ունենալը բաւական չէ՛, պէտք է բարեխիղճ ըլլալ և զայն ծառայեցնել հասարակաց օգտին, տալով գարոցին կարող ու ձեռնհաս վարչութիւն մը:

Մենք կը ցանկայինք, որ Վառնա այս անգամ գոնէ չի թերանար իր պարտականութեան մէջ:

Մարգարէտներ

## ՎԵՆԵՏԻԿԵՆ ԷԶՄԻԱԾԻՆ

Կուրծք սփոփանքի հառաչի մը տակ կուտի ու աչքերը զմայլանքի արտայայտութիւնը կուսնան երբ ձեռքդ առնես սուրբ գրական նոր հրաշակերտը զոր վննետիկ վսեմ ու սրտաշարժ մէկգով մը կը կարկառէ Էջմիածնին՝ անոր հաղար վեցհարիւրամետակին անթիւ. Գրքոյ մըն է ան, նիհար բայց չքեղ, ուր գծուած են հայ կաթողիկոսներու պատմական բնակավայրին կեանքին գրուագիւնները, այն մանրակրկիտ ու խնամքոտ զննումովը, զոր Միթարեանները միայն գիտեն զնել իբեց ուսումնասիրութեանցը մէջ:

Կողքը, ոչորկ զեղին յատակի մը վրայ, !ը ներկայացնէ Էջմիածինը իր խորհտապանձ կեցուածքովը. իր գմբէթներուն խորհրդաւոր սլացքովը դէպի Արարատի կապոյտ երկինքը. Իր պարզութեանը մէջ ինչ անդորր չքեղութիւն. Վարը, Հայրիկին պակերը, փառայիլ ձիւն մօրուքովն ու քնքով զգուող նայուածքովը կնգուղին տակ, որ համեստակ հով մը կուտայ ծեր Հայրապետին. Գովիկը արձանագրութիւն մը. Պա՛ն. Վեհա-

փառութիւն Տ. Տ. Մկրտիչ Ա. Մայրազոյն Պատրիարք և կաթողիկոս ամենայն Հայոց, մեծարանօք նուիրի ի հարց Միթարեանց Վեներաբոյն:

Գրքովը. ինչպէ՛ս ըսի, Էջմիածնայ շէնքին պատմութիւնն է իր հաստատումէն մինչեւ մեր օրերը. Վկայութիւններ և յիշատակութիւններ կը վխտան՝ այդ հոյակապ հաստատութեան կրած փոփոխութիւնները մանրամասնօրէն նկարագրելու համար:

Էջմիածին անունը ժերգ. զարուն միայն երեւան կելլայ, բայց յայտնի չէ թէ ե՞րբ և ո՞վ այս անուամբ կոչած է զայն. Տաճարը թէեւ զանազան ժամանակներու մէջ աւերուած է կրած է, բայց ձեւն ու շափը միշտ նոյնը մնացած են, ըստ աւանդութեան. Յիշուած են այն բոլոր կաթողիկոսները, որոնք Էջմիածնի բարեգարգութեան և նորոգման հոգ տարած են. Աթոռին զանազան մասերը յստակ ու մաքուր պատկերներու մէջ կը ներկայացուին. Էջմիածնի ընդհանուր տեսարանը, յատկաձեւը, զանգակատունը, անոր աւագ դուռը՝ սքանչելի դրուագներով զարդարուն, Էջմիածնայ խորանին հին գուռը՝ հայկական ոճով յոյժ գեղեցիկ ու հոյակապ քանդակ մը, յետոյ կաթողիկոսի նկարներ, Եփրէմ կաթողիկոս, հանդարտ ու զեւոնդեան զիմագծութեամբ եկեղեցական մը, որ աւետարանիչի մը տպաւորութիւնը կը թողու՛ էր ձեռքը բացած աւետարանովը. Ամէնէն ուշագրաւ պատկերներէն մէկն է Հնդկաստանէն բերուած ասեղնագործ շուրջաւոր. հայ կրօնականութեան ամէնէն մտահար և ամէնէն թանձր արտայայտութիւնը, տաճարներու, խաչերու, սուրբերու, հրեշտակներու խառնում մը՝ միսթիկ ու նախնական գծագրութեամբ մը. կաթողիկոսական գահը նոյնքան հետաքրքրաշարժ որքան շքեղ,

իր հովանոցակովը, որ ամբողջ գործարարը եկեղեցիի մը մանրանկարը կը կրէ: Գեորգ Գրգ. կաթողիկոսին, Յովհաննէս կարբեցի կաթողիկոսին և Ներսէս Աշտարակեցիին պատկերները իրարու կը յաջորդեն, այլազան տիպարներ ներկայացնելով: Ապահովապէս, գրքոյկին նկարներուն մէջ էն յաջորդ ու էն աչքառուն Աշտարակեցիին է: Հոր ու մեծ Հայրապետը բազմաձէ գահին վրայ՝ արթուն ու ազգողական. կրօնաւոր սովորական թոյլ, մեղկ ու յղփուս կեցուածքը չունի ան. գէմքին ուժեղ, խորունկ ու յստակ գիծերը կը ցոլացնեն այդ խորատ ու աննուած նկարագրին: ամբողջ ուժգնութիւնը. կարբեցիին խելօրիկ ու անուշ նայուածքին դէմը, Աշտարակեցիին մարտական, յովորտ, բարձրաթուր շնչոյ մը կը քնէ իր սրածայր վեղարովը, ցայտուն ճակտովը, արծուային քթին յամառ ու խիստ աշտարակունովը, դաժան ու թափանցանց նայուածքին ամբողջ ահազեցիկ անհունութենէն լուսաորուած: Մօրուքը՝ ուժգնաբախ ալիքի մը փրփուրը կարծես նահապետական չը ներ գիծազրծութիւնը, ընդհակառակը. իր բարակ, փուշ փուշ փուռածքովը լանջքն ի վար՝ բոլորովին կամբողջացնէ գէմքին ներազող արտայայտութիւնը: Տգեղութիւններ կան, որոնք աւելի ուշագրաւ են ու աւելի հմայօտ, քան շատ մը գեղեցկութիւններ: Աշտարակեցիին տգեղութիւնը աս տեսակէն է, ինչպէս իզմիրթեանինը, Վօլթէրինը, Միռապօսինը:

Ու խորմեան Հայրիկը կը յաջորդէ մեծ Հայրապետին, խեղճ խորմեան Հայրիկը, գուցէ ամէնէն գեղեցիկ հայ կաթողիկոսներուն: Անոր աչքերուն մէջ ժըպիտը կայ միշտ: որ ա՛լ անհետացած է հիմակ անշուշտ: Երկու մեծ զոհերը մոսկոֆեան խա-

բէութեան և նենգութեան, Կորսլաւագոյն պիտի ըլլար այդ չքնաղ գրքոյկին մէջ գէմ գիծաց շնչը, թոյլ տալու համար երկու հոյակապ գէմքերուն իրենց ցաւերովը, տառապանքներովը յաւերժօրէն գիտել զիրար, պատմել իրարու իրենց անհուն կեկիծները. իրենց հոգիներուն անպարագիծ տուայտանքը:

Ու շեռ ուղեր բաժնուիլ այդ նկարներէն ու այդ էջերէն, որոնք հայուն սրտին ամէնէն մօտիկ բաները կը բարբառին, որոնք անձանթ յոյզքեր, անքսուռներ կը պտտցնեն մէջդ, որոնց մեծութիւնը, հրապոյրը, հմայքը՝ կատաղութեան բուռն յորձանքներ կը շարժեն ներսդ երբ՝ դաղափարներու, դառն զուգորդութեամբ մը՝ կը մտաբերես սուղը որ հիմակ իր բոլի սեւ թեւերը տարածած է ատոնց վերայ, անուշ հայրենիքին, Արարատին ու Կովկասին վրայ, կը մըտաբերես աննախընթաց աւազակութեան արատը որով ինքզինքը ծածկելէ չամչցաւ աշխարհի էն մեծ պետութիւններէն մէկը, մեզի պէս աղքատ ազգի մը յետին քորչերուն երկնցնելով իր գազանային ճիրանները:

Շաւարշ

«ՏԻԿԱՌՈՍ» ԹԵՐԹԻՆ  
ՄԱԿՆԻ. ԽՆԴՐՈՑ ՄԱՍԻՆ  
ԿԱՏԱՐԱՊ ԵՔԻՆՈՒԹԻՒՆԸ:

«Էօնօրէն» մէջ այս վերնագրով յօդուած մը կայ, զոր թագադրանքար կը ներկայացնենք «Շարժում» ընթերցողներուն, ցուցնելու համար թէ քաղաքական շրջանակներու մէջ բաւական լուրջ կարեւորութիւն մը ունեցող այդ մեծ թերթը որ աստիճան ցածնալ ու սողալ կրնայ յանձն առնել համիտական տասնեակ հազար փայլուն ոսկիներու պիղծ հմայքին տակ, «անկեղծութեան» ու «անկողնակալութեան» փայլուն յայտարարութիւններու զիմակով Մեծ Մարդասպանի մը անուիլը գազանութիւնը

պարտկելու և անոնց հիզմանները լրբարար չբեղելու համար:

Պէտք է յիշել որ Ֆիկաուոի համար ասիկա նորութիւն մը չէ, ինչ որ այսօր Մակեդոնիոյ համար կընէ այդ թերթը, նոյնը հայկական ջարդերու աստիճան կատարեց, Այդ տխուր թերթը Յրանալի ասպետական անուշ մրտող արատ մըն է:

Ահա ասիկ ինչ որ «Էօնօրէն» ի կարեւոր աշխատակիցը Մօսկո Գան կը գրէ այս առթիւ:

Կարելի չէ լուրջութեամբ անցնել այն հինգ յօդուածներուն վրայ, զորս Ֆիկաուո թերթը հրատարակեց Մակեդոնական խնդրի մասին Վեր խուզարկութիւնը թուրքոյ մէջ՝ քիչ մը ուսուցիկ վերնագրով:

Ատոնց առաջինը Կ. Պօլսէն գրուած «Բուն խնդիր» վերտառութիւնն ունի: Առաջարկուն Պ. Էմիլ Պէա կը պատմէ անոր մէջ Բէօսթէնէն Պօլսի գալու ատեն թուրք պաշտօնեայի մը հետ ունեցած խօսակցութիւնը: Ես չի հասկցայ թէ այս պաշտօնեային նայելով ինչ էր «Բուն խնդիր» միայն իր ճառին մէջ, քանի մը երկդիմի հաստատումներ, քանի մը Յրի հերքումներ գտայ, որոնցմէ կը հետեւէր նաեւ թէ Մակեդոնիան յեղափոխութեան մէջ չէր և յետոյ թէ՛ պատմաբանները թուրքներ, որ փոքրամասնութեան մը գործն է, Թուրքոյ արգելք կը հանդիսանայ, Մանաւեղ Մուլթանին, մեկեղանացի գիւղացւոյն վիճակը իր ուղածին պէս բարեկեցելու:

Երկրորդ յօդուածը, նոյնպէս Պօլսէն գրուած, «Փողոցը և Պալատը» վերտառութիւնը կը կրէ: Չայն կարգալով հասկցայ թէ փողոցը հանգարտ է եղեր, ոստիկանական նախազգուշութիւնները անվերջ և թուրք պաշտօնական մարդոց վրայ անտարբեր հանդարտութիւն մը գործուած: Առաջին երկու յայտնութիւնները ինձի շատ տարօրինակ չեղանքան, երկրորդը, ընդհակառակը, զարմացուց զիս: Պօլսու մէջ ղեռ ոչ երկար ատեն առաջ (անցեալ ապրիլին էր) երբ կացութիւնը այսօրու ընէ նուազ ծանրակշիռ էր), պաշտօնական մարդիկը բաւական անհանդիստ տեսայ, Հասարակութեան պարզ դասակարգը բոլորովին անտարբեր էր մակեդոնական զէպերուն: Բայց գարծի ու դրամի մարդիկը, որոնք

թուրքերու մայրաքաղաքին մէջ լայն տեղ մը կը գրուեն, անսքողելի շահագրգռութեամբ մը կը հետեւէին մակեդոնական պատմութեան զարձակմանը: Անոր ալ պատճառը այն տարտամ վայրն էր, ձանձրոյթով խառն, որ գոյացած էր հրապարակին անընդհատ մակեդոնական զէպերու հակահարուածը կըրելէն: Լաւ կըլլար որ Ֆիկաուո մեզի Բէօսթէնի կամ Պէթլի կարծիք տար այս մասին, որոնք զանազան վարչական ժողովներու ազդեցիկ անդամներն են: Անոնց հաղորդածները, եթէ երբեք կարելի ըլլար զանոնք խօսեցնել, աւելի նշանակութիւն ունէին, քան թէ Էօնօրէնին Մուլթանին ներկայանալէն կրնայ տրպաւորութիւնները, որոնք մեր թղթակցին երրորդ յօդուածին նիւթը կը կազմեն:

Պ. Լօքուա Վոսփորի փոքրը այցելած է Իբրեւ զբօսաշրջիկ ու իր այցելու թիւնէն գիւթուած է: Սուլթանէն սիրուն ընդունելութիւն մը զբտած է, եւ Երլաքի Սուլթանի լուր սենեակներուն կանաւորման մէջ Ֆրանսական ճաշակին տիրապետում տեսնելով, իր բարի հայրենասէր մը, յուզուեց է: Իսկ Մակեդոնիոյ համար Մուլթանն ալ յայտարարեց թէ Մակեդոնիան բնաւ յեղափոխութեան մէջ չէ, թէ պուլիար փոքրամասնութիւնը չուսով անկարողութեան պիտի ենթարկուի, թէ խլորտումները աւելի մոռնանք չեն որքան միւս ժողովուրդները: Մուլթանը աւելցուցեց է սր. ինք էն առաջ իր գործերուն գործած ծայրայեղութեանց համար ցաւ կըզգայ եւ հրամաններ տուած է, որ յանցաւորները պատժուին: Պ. Լօքուա պալատին բաժնուէր է համոզուած կամ յայնպէս երեւոյնալով՝ Մուլթանին յանտեսութեան ու հանգստութեան:

Պ. Էմիլ Պէա ի չորրորդ յօդուածը Սելանիկէն գրուած է եւ կը կրէ «Թուրք պահեստի զօրքերը» վերտառութիւնը: Նախ ոստիկանական կանխազգուշութեանց մասին հանձնարարական անկողններ, այդ հակողութեան մէջ հետեւանքին վրայ զուարճալի զիտողութիւն մը, մաքսանկարութիւնը բոլոր ծրարներուն բացուելուն պատճառաւ անկարելի ըլլալով (որովհետեւ կոզնի ապահով ըլլալ սինամիթի չի գտնուելով), կառավարութիւնը եւ յաճախ մաս-

ՓՅԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ  
(11)  
ՆՈՒՆԻ Ս. Չ. — ԻՆ  
ԳԼՈՒՆ Գ.

Սարսափահար Տաճկանայք, տուն, տեղ, ինչք ու կալուածներ թողած փախչում էր զէպի կովկաս. իբր թէ քրիստոնեայ պետութեան հովանիի տակ ապրող իր բարեկեցիկ եղբորից օգնութիւն ստանալու յուսով... Շիրակի, Սուրմալուի, Էլմիսնիի գաւառները լցվում էին մեղկ, անօթի, ուժաթափ հայ գաղթականներով. որոնց ծայրը Սեւ ծովը ճեղքելով հասնում էր մինչեւ նրա հիւսիսային ափերում գտնվող քաղաքները: Հայաստանի քաղաքները փողոցներում, հարուստների բնակարանները առջեւ, եկեղեցիների գաւթիկներում, առաջնորդարանների քակերու, բարեգոր-

ծական հաստատութիւնների առջեւ գեղեցիկ էր հայ գաղթականը աւան սեռի ու հասակի, որպէս զի մի փշուր հաց ճարելով սրից ազատված իր գլուխը պահէ:

Այնտեղ, աւերակ դարձած, հրդեհված, ու արհեստոված Տաճկահայաստանում միացող հայերի ողբն ու հառաչանքն էր բարձրանում խուլ անզուրկ երկնքը, որին այնքան երկար տարիներով հաւատացել էր խեղճ Հայը: Կովկասում սարսափահար անօթի մահապարտների հեծեծանքն էր լսվում փողոցների մէջ, պատերի տակ, կիսաբանդ խրճիթներում:

Մարտիրոսանում էր հայ ժողովրդի մի խոշոր մասը. իր լուսաւորչի երեւակայական շարժարանքներից աւելի սոսկալի շարժարանքներով:

Ամէն կողմ լսվում էին հայ մեր, երիտասարդ, կանացի քնքուչ ու առնական թուրացած կողորդներից.

— Այս ինչ պատուհաս էր, Ասուած,

որ մեր գլխին բերի:

Ու փողոց, տուն, արծազանցում էին հազարաւորների տառապանքի բացականչութիւնը, մարդկանց ականջները խլացնելու չափ ուժով:

Այս պատուհասը մեծ էր, աներեւակայելի մեծ, հին դարերի մէջ հային զլխին պատահած պատուհասները նսեմանում էին այս նորի առջեւ, որը հասաւ Սուլթան Համիտի եւ քաղաքակիրթ մարդկութեան վարիչների ձեռքով: Ու այդ աներեւակայելի պատուհասի առջեւ տմարդիօրէն քաջամարտիկ հայ յեղափոխականը չընկնէր էր շարագուշակ բուրի նման:

— Ամեն բան վերջացաւ, էլ յոյս չըկայ. Հայը կորչում է. նա անկարող է ինքնուրոյն կեանք ունենալ:

Միւս կողմից օգնում էին հայ հարուստը եւ հայ կղերը.

— Յեղափոխականները քանդեցին հայ ազգի տունը, մեր միակ գործը

պէտք է լինէր մեր ստորաքաղաք գործութիւնը պահպանելու. ձեւերը սովորել:

— Միայն է՛ր, սխալ է՛ր, սխալ գործեցինք. խրատական խորոտ եղանակով ճանուց էր օտարացած. ի մաստակ, վտանգի ծայրը դեռ չսիրած երկրից փախչող պուրիթիզմ գրապէսը:

Ու այդ շարագուշակ, վատեցնող բարբառանքները աւելի էին խոսքում ընդհանուր ազգային լքումը եւ հայի ներկան վերածում խառարամած գլխերի: Յուսատու փոքրիկ ասող անդամ չէր պլլուում այդ թանձր խաւարի մէջ, ձգմղել էր ամբողջ ժողովուրդը. ճգմղել էին առանց այն էլ թոյլ յիղափոխական կաղանկեր պուրիթիզմը: Տեղ տեղ միայն առանց յանդգնելու իրենց գլուխը դուրս հանել այդ ընդհանուր լքում մի մէջ, մըլճելի նման աշխատում էին դեռ չընկնուած անհատները:

նաւորները կ'օգտուին ոչ-ուղղամիտ մրցման այս խնդրոսէն Յետոյ զին-ւորական կառավարման նկարագրող պատկերը գործերուն եւ սպանե-րուն սակաւապիտան յարգանք-որուն արժանի են . նաև յարգանք անոնց կարգապահութեան — որուն բնու արժանի չեն . վկայ՝ սահմանա-վիթի պատահարները : Վերջապէս ցանկ մը շարժման մէջ եզոզ եւ մեր-ձաւոր ժամանակի մէջ ըլլալիք բա-նակին թուոյն : Ըստ մեր քննիչին . 300000 թիւը շափարահանութիւն է . հիմնականում 250 000 զօրք կայ մի-այն Մակեդոնիոյ . թրակիոյ եւ Ալ-պանիոյ մէջ : Ահաւասիկ պուլկար կառավարութեան մշտական մէկ գան-գատին ուղղակի պատասխանելու կէտ մը . այս վերջինը մտահոգու-թեան մէջ է թուրք բանակին չափա-զանց կուտակումէն . զոր իբր զբո-սում մը կը նկատէ եւ անհրաժեշտ կը կարծէ իր սահմանը պաշտպանելու համար : Թուրքիա այնքան զօրք չէ կուտակած . 250000 զօրք միայն կայ . բաժնուած թրակիոյ . Մակեդոնիոյ եւ Ալպանիոյ մէջ : Իսոյ իրաւ է որ կը խնայուին ոչոյն ինքն Ֆիկաոս 130000 բեռնիներ ալ ամենամօտ ժա-մանակի մէջ պիտի հաւաքուին :

Ֆիկաոսի հինգերորդ եւ ցարդ վեր-ջին յօդուածը . որ Մանասթիկէն զեր-ուած է «Մարդ մը վերտառու-թեամբ . արժանի է աւելի երկար ու-սու մնալու թեան պարունա-կած ներթին կարեւորութեան պատ-ճառաւ : Այդ յօդուածը նուիրուած է Հիլմի փաշայի ձեռքով Մակեդոնիոյ մէջ կատարուած բարենորոգումն-րուն : Պ. Էմիլ Պէն մեզի կը ներկա-լացնէ Հիլմի փաշան շատ ուժեղ եւ մանաւորապէս փաղաքական գոյնե-րով : Բայց իր գծած կենդանագիրը . ինծի համար որ մարդը շատ լաւ կը ճանչնամ . բնաւ չի նմանելու ամե-նամեծ թերութիւնն ունի :

(Մնացեալը յաջորդով)

**ՅԱՐԻՆ ԶԱՆԱՊԱՐ-ՅՈՐԴԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ**

Ռուս յեղափոխական եւ փախուս-կան Պետրոս Սթրուվէ . որ իր «Ազա-տութիւն» թերթին մէջ շատ անգամ լոյս աղխարհը բերած է զանազան

պետական գողտնիքներ . Յարին Հը-սովի այցիլութենէն հրատարակու-նաթիւ գրած է հետաքրքրաշարժ օգուած մը . որմէ կը քաղենք կա-րեւոր կէտեր :

Իտալական որոշ թերթեր վիրա-ւորուած են Յարին Հոովմ չերթալուն համար : «Իտալիան թերթը կը գան-գատի . որ ռուսական ոստիկանապետ Լօպուիսէնի պաշտօնեաները իրենց տիրոջ սխալ տեղեկութիւններ հաղոր-դած են և վտանգներ ցցուցած հոն . ուր բան մը չկար : Իտալական թեր-թը Պետրոսթրուվէ կ'ըսուած ու ժր-ջան պաշտօնեային անիրաւութիւն կընէ . որովհետեւ նա ունի իր մաս-նաւոր ըմբռնումը ցարավայել ճանա-պարհորդութիւն մը սարքելու հա-մար : Նա ծանօթ է ռուսական մէ-թոսներուն և իրաւունք ունի . երբ նա Իտալիան մանաւաղ Հոովմը իր տիրոջ ճանապարհորդութեան համար անյարմար գտաւ : Սթրուվէ կը խն-դրէ մամուլի մարդոց . երեսփոխան-ներու և թագաւորին . որ ոչ Լօպու-իսիին ոչ Մանասթիկին և ոչ էն-րիկօ Ֆէրրիին բարկանան . Լօպու-իսին համալսարանական կրթութիւն ատած պետական պաշտօնեայ մըն է՝ շատ քաղաքավար եւ հաճոյակատար . Մանասթիկ ձեր և փորձուած իրաւա-գէտ մըն է . Ֆէրրի համալսարանի մէջ իրաւանց ճիւղին պրօֆէսոր . ճանապարհորդութեան մը մասին այս մարդիկը ի՞նչու չը համաձայնե-ին : Ստրուվէ իրեւ ուսու հայրենա-սէր՝ կուզէ հաշտութեան համար ա-ռաջարկ մը ընել . Ռուսիա զօրաւոր երկիր մըն է . իր պետը աշխարհի ամենահզօր իշխանը . անոր երկիրը ունի իրեն յատուկ կառաւարկութեան ձեւը . որու հասնիլ չեն կարողարե-ւուտքի ձող աղբերը» :

Այս ձեւերուն վրայ հեղինակը ու-նի ընդարձակ ծանօթութիւններ . զորս քաղաքակիրթ աշխարհի ներկա-լացնելու հաճոյքէն նա զինքը զրկել չուզեր . Տամ օրինակ մը—կըսէ նա— և Իտալացիներու բարկութիւնը պի-տի իջնայ . Քանի մը ժամանակ ա-ռաջ Յարը Ստրուվէ գնաց . այնտեղ ստորի մը նշխարներուն օրհնութեան հանդէսին ներկայ գտնուելու համար : Այս ճամբորդութիւնը ռուսական պատմութեան մէջ ուրախալի երեւ-ոյթ մըն է . որ հեղինակին վրայ ձը-գած է մեծ սպաւեռութիւն : Սուր-բն Սարաֆիմ ի փառս եկեղեցւոյ և

պիտութեան ամէն օր հրաշքներ կը գործէր . զորս հաստատուեցան ոստի-կանութեան կողմէ :

Բայց կատարուեցաւ աւելի մեծ հրաշք մը . . . Ռուս ոստիկանութեան կողմէն . որու մասին թող խօսին պաշտօնագրի մը հետեւեալ յօդուած-ները :

1. Կայսերական ճանապարհորդու-թեանէ երկու օր առաջ զիւղերու հե-ռաւոր և մօտաւոր տուները պիտի ենթարկուին խուզարկութեան :

2. Խուզարկող մարմինը կը բաղկանայ երկու վիճաներէ . երկու ոստիկանա-կան սպաներէ և գիւղապետէն : Ան-բընակ տուները բարձրագոյն ճանա-պարհորդութեանէ 4 ժամ առաջ պէտք է կնքուին . . .

3. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ ընդունիլ ըն-տանիքի անդամներէն գտն ուրիշ մարդ :

4. Բարձրագոյն ճանապարհորդու-թեանէ 2 4 ժամ առաջ ճամբուն վրայ գտնուող տուներու մէջ պիտի դուրսն 2 ոստիկաններ :

5. Կայսեր անցնելէն 4 ժամ առաջ տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

6. Ծամբուն վրայ գտնուած բոլոր պատահանները և բացուածքները տախտակներով դասուած պիտի ըլ-լան :

7. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

8. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

9. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

10. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

11. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

12. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

13. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

14. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

15. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

16. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

17. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

18. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

19. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

20. Խուզարկու թիւնէ վերջ արդիւ-ւած է տուներու մէջ պիտի դուրսն զին-ւորներ և ոստիկաններ՝ պէտքին հա-մեմատ :

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Կիրակի հոկտեմբեր 26-ին պի-տի կատարուի եկեղեցական կալ-ուածներու գրաստան առթիւ ին-կոյ Ռուսահայ նահատակներու 96 թուին կոտորածներու մէջ ինկած կուժ Տաճկահայ նահատակներու ի յիշատակ

**ՀՈԳԵԼՈՒՄԵՆ ԵՒ ՍԳԱԼԱՆԳԷՍ**

Հոգեհանգիստը պիտի կատա-րուի տեղւոյ Ս. Սարգիս եկե-ղեցւոյն մէջ ժամը ճիշդ 9 ժին . որմէ յետոյ պիտի մեկնուի «Սա-էտինէնի» սրահը . ուր պիտի կատարուի Սգահանդէսը :

Պիտի ատենախօսին Պ. Պ. Մարչ պետունի և Սուլչալու Սեւակ . Սեւակ նախօրինակը ազատ է . բայց խօսիլ փութաբար չի օր առաջ պարտին լուր տալ յանձնախում-բիս անդամներէն Պ. Պ. Մարչ պետունիին և ձանկիւլեանին :

Յանձնախումբս կը հրաւիրէ Վառնայի հայ երկուսն հասարա-կութիւնը ներկայ գտնուիլ և պատուել նահատակներու յիշա-տ . կը :

Յանձնախումբ

**ԱՌՆՍՈՒԹԻՒՆ**

Տ. Տ. Մկրտիչ Վեհափառ կաթո-ղիկոս Խրիմեան . Ընդհանրական Հայ-րապետ Ամենայն Հայոց .

Ի Ս. Էջմիածին

Վեհափառ Տէր .

Հայոց եկեղեցական կալուած-ները գրաւելու մասին Ռուս կա-ռավարութեան ուղղումը մեծ վիշտ պատճառեց . ինչպէս ամ-բողջ Հայութեան . նոյնպէս ալ Սուրենյանցեան Հայերուս :

Հայ ազգը . որ սրտատրոհիք զձեռ կըսպասէ իր Վեհափառ Հայրա-պետին որոշումը լսելու . գերա-զանցապէս գոհ կըլլայ ինքզին-քը . երբ կը տեսնէ որ այս ծանր հարուածի տակ Դուք՝ Վեհափառ Տէր ու Ձեր ստորագրածալ Բար-ձր Հոգեւորականութիւնը . Ձեր կողման բարձրութեան վրայ հա-ւատարիմ կը մնաք . ու բոլորովին չէք համակերպիր ստորագրելու այն պաշտօնաթուղիները . զոր կը հրամայէ յափշտակել ամբողջ Հայութեան կարեւոր հարստու-թիւնը :

Արդ մեր անստիճան ուրախու-թիւնը յայտնելով Ձեզ . Վեհափառ Տէր . Ձեր պարտաճանաչութեան համար խոնարհաբար կը խնդը-րենք Ս. Օծու թիւնէդ . որպէսզի անդրդուելի մնաք Ձեր այդ կո-րովի որոշման վրայ ու ամէն զոհողութիւն յանձն առնելով եր-բեք չի զիջալիք Հայ ազգին հարստութիւնը Ռուս կառավա-րութեան յանձնելու :

կազմակերպութիւններ ձեռնարկ-ները . նրանք ճշմունք էին մահաց-նող յոգսահատութեան ճիւղաներից-զորս կորցել գոնէ այն սակաւաթիւ-ներին . որոնց արիւնը սրտերում զեռ չէր ցայաքել . որոնց հոգիները զեռ վրէժխնդրութեան կայծերից չէին զրկել : Բայց քանի որ այդ անը-կուն յեղափոխական տիպերը յուսա-հատութեան մէջ ընկղմած ժողովրդ-ներին սթափեցնելու տիրական յան-գործութիւնը չունէին . զրա համար էլ շատ հաւանական էր որ նրանց գերմարդկային ճիգերը զուր անցնե-ին . եթէ սեղի չուներնար ողբերիչ պատմական դէպքը . . .

Հայաստանի հեռու ընկած ան-կիւնուճ . բարձրաբեր լեռներու ժայ-ռերէ մէջ ապրող մի բուն քաջ Ձէյթունցի հայեր . որոնց ականջն էր ընկել հայ գանդաձի հառաչանքը ու ողբը . ոտքի է կանգնում եւ ի-րենց սրի տակով անցկացնում այն

թուրք զինւորներին . որոնց նման-ները անպէն հայերին կատարել կ'ին լիրբ յոխորտանքով :

—Ձէյթունցի ապստամբել է . Ձէյ-թունցիները գործերին գերել է . Ձէյթունցիք զօրաւորը քանդել են . երկտարականացնող ազգային ստրկու-թեան արատը մարքող աւետիսները կայծակի արագութեամբ թռչում են գէպի շարած . ինքնիրեն արհամա-րող . քարացնող լքումի մէջ խեղդ-վող հայութեան ականջը :

Ու խաւարած հայ ներկայի մէջ կրկին երեւում են ազատութիւն սու-րող պայուսն ստորիկները :

—Ձէյթունցի ապստամբել է . Ձէյ-թունցի պաշարված է . Ձէյթունցիք տասնեակ հազարներով թուրք զօրք են շարժել . Եւրոպացիները Սուլթա-նից պահանջում են կանոնաւոր բա-նակցութիւններ սկսել . կարգում է հայը իր եւ օտար թերթերի մէջ . ու կամաց կամաց ազատվում այն

սարսափելի կոշմարից . որ նրան գետ-նին էր գամել . Բայց այդ էլ երկա-րատու չէ . Ընկճվում է եւ Ձէյթունցի-թեւ պատաւոր կերպով . թէեւ ի-րեն համար մի քիչ չնչին առաւելու-թիւններ ձեռք բերելով . Հայկական գանդուածը կրկին նոյնը մնաց . նոյն թշուարը . նոյն թափառակասը . նոյն հալածակասը . . .

Բայց ոչ . նոյնը չը մնաց . նա սիրտ առաւ . նա մի քիչ իր վրէժ առած զգաց իրան . իր մէջը ոյժ գտաւ չընկճվելու մեծ պատուհասից .

Բայց աւելի սրտապնդիցին նրանք . որոնք զեռ յոյս ունէին հայի կորո-վի զիմացկունութեան վրայ . Ու այլեւս յանդիմանութիւն ստացան գր-ուելիները բարձր դուրս գալ համոզե-լու որ մեծ պատուհասը ժահարել չէ հայ ժողովրդի համար եւ սկսած պայ-քարը պէտք է շարունակվել :

(Շարունակելի)

Յայնժամ թող ամբողջ աշխարհ հասկանալ թէ հայաժողովը Հայ ազգը ու անոր Հայրապետը գեոգրաֆիկ իրենց արդար իրաւունքը պաշտպանել, ու զանոնք ստեղծելու ընել չի տալ նոյն իսկ ամենազօրեղ կառավարութեանց:

Առ այս մտղթելով Ձեզ անսահման եռանդ ու արիւթիւն:

Մնամք  
Սոնարհ որդիք Ս. Օձութեան

Կարգադիր յանձնախումբ  
ի Դիմաց 650 Ժողովրդեանց  
Կրօնադպրոցի  
Ատենադպիր Ատենապետ  
(Կնիքի)  
6 Հոկտ. 1903  
Սուրիւն

ՀԻՉԱԿԵԱՆ ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԿԸ

Հեռագիրը տխուր լուր մըն ալ բերաւ. նազարէզէն վերջ ըստ պաննութեան փորձ է կատարուած և այս անգամ դժբաղդարար յաջող կերպով. Հին—Հնչակեան կեդրոնի անդամ՝ Սազունիի վրայ, Մանրամասնութիւններ կը պահուին. Երանի թէ լուրը չի ճշդութիւն, որովհետեւ սա մեր յեղափոխական կեանքի մէջ այնպիսի տգեղ երեւոյթ մըն է, սը եթէ շարունակուի մեզ կը տանի դէպի վերջնական անբարոյականացում և այլասերում...

Արեմն վերջ այս գրութեան, ալ բա՛ւ է որքան Հնչակեանները զիրար կոտորեցին:

Նազարէզի վրայ եղած սպաննութեան փորձի մասին «Վերածնութիւն» էն կը քաղենք հետեւալը:

... Այս ճիւղաղային արարմունքի առթիւ Վառնայի իրաւարարքա փալատի աննուղայ խմբագիրը իր զառանցանքները քշել ուղեւորով անգոյ ենթադրութիւններ ընելու ելած է:

Միանգամ ընդ միշտ կը յայտարարենք թէ Հնչակեան Կուսակցութեան մէջ Գաղափարի տարբեր հոսանքներ գոյութիւն չունին և ատոնք ծնունդ են միայն փալատի գրչական հիւանդ երեւակայութեանը:

Մենք, որ արհամարհած ենք միշտ այդ հրապարակագիր—խրտուրէլակը իր ստոր ընթացքին համար, այս անգամ ալ, իր ոճադրոճ բարեկամներուն փաստարանութիւնը սեանձնելուն առթիւ, կը յայտնենք իրեն մեր պժգանքը և կը հրաւիրենք զինքը որ ինչպէս անպատկոտօրէն կը զրպարտէ՝ մեր թանկագին ընկերին բոլոր համակրողներուն—կամ որ նոյնն է Հնչակեան Կուսակցութեան,— վերագրելով այդ սպաննութեան գործը, այնպէս ալ թո՛ղ հերքէ և կամ հաստատէ իր ըսածները: Հակառակ պարագային, պատասխանատուներէն մէկը պիտի ճանչնանք զինքը այն ներքուստ փայփայած «ոճիր»ին, որուն հեղինակները գգուելէ չի դադրիր իբր անոնց վարձկան փաստաբանը:

Իսկ՝ մեր բոլոր այն համակիրներուն, բարեկամներուն և ընկերներուն, որոնք իրենց ցաւակցութիւնը յայտնելով հանդերձ անձկութեամբ լուրի կը սպասէին մեր ընկերոջ առողջութեանը մասին, կը յայտնենք թէ մեր ստացած վերջին տեղեկութիւններու համեմատ՝ բարձրելու վրայ է անոր վիճակը և մէկ քանի օրէն ոտքի կը լլայան:

Աւերոք չենք սեպեր հոս քանի մը մանրամասնութիւններ աւելցնել այդ հրէշային արարքի մասին:

Սպաննութեան փորձը կատարուած է կիրակի գիշեր, ժամը 11ին ատենները՝ միջահասակ և թխագոյն անձի մը կողմէ: Ոճրագործը՝ որ քանիցս յարձակուի գործած է մեր սիրելի ընկերոջ վրայ՝ յաջողած է միայն անոր ուսին և ճակտին դաշոյնի երկու հարուած իջեցնել և ապա փախչիլ:

ԲԱՐԵՆՈՐՈՎՄԱՆՆ ԵՌՐ ԵՐԱԿԻՐԸ

Միւրջ թէ կի խորրդակցութեան արդիւնք՝ Մակեդոնիոյ բարենորոգման նոր ծրագիրը վերջապէս հրատարակուեցաւ, որուն գործադրութիւնը երկու պետութեանց կողմէ անհրաժեշտօրէն կը պահանջուի: Աւստրիացի և ռուս պաշտօնեաներ Հիւմի փայայի հեռամեն կողմ պիտի շրջին և զինուած լիազօրութեան ընդարձակ իրաւունքներով պիտի հսկեն բարենորոգմանց կէտ առ կէտ գործադրութեանը վրայ: Ասկէ զատ բոլոր կազմակերպող ոյժերը կազմուած են եւրոպացի սպաներէ և զօրավարներէ, որոնք պահանջել հարկին իրաւունք ունին պաշտօնի գլուխ կանչել նաեւ օտար սպաներ և ենթասպաներ:

Ի հարկ է այս բոլորին հանդէպ յեղափոխականները նորէն կասկածանօք պիտի վարուին և չպիտի բաւականանան եղածով, բայց երկիրը այնքան ոյժասպառ եղած է, որ անոնք ալ ըստիպուած պիտի ըլլան համակերպիլ:

Պուկարիա կրնայ պարծենալ, որ իր երկու խիտտ յիշատակագիրերն ալ, որոնք պատերազմ կը սպասուային, արագացուցին գործը:

Սուլթան Համիա իր աստուածային իրաւունքները անարգուած համարելով մերժեց ընդունիլ այս ծրագիրը, բայց երկու պետութիւնները որոշած են բանեցնել ոյժ, որու առջեւ աղուէսը ի հարկէ գլուխը պիտի խոնարհեցնէ:

Ահա ծրագրին պարունակութիւնը:

Բարենորոգմանց գործադրութեան վրայ սակեւ համար Հիւմի փայայի քով պիտի գրուին աստրիական և ռուսական պետութեանց գործակալները, որոնք կառավարիչ փայային պիտի պարզեն երկրի պետքերը:

ցուցնեն թիւրք պաշտօնեաներու թերութիւնները և պիտի հազորդեն անոր իրենց զէս պաններուն առաջարկը:

Պետութեանց հսկիչ գործակալներու իրր օգնականներ պիտի նշանակուին եւրոպացի քարտուղարներ և զինուորականնր, որոնք ամէն կողմ շրջելով պիտի հսկեն տեղական պաշտօնեաներու վրայ և ժողովուրդէն հասկնալով իր պահանջները պիտի ներկայացնեն կառավարութեանց գործակալներուն:

Բ. Դուռը պարտաւոր է այս գործակալներուն տալ ամէն զիրութիւն:

Որվհետեւ մինչեւ հիմա կարգուած Շվեյտացի սպաները երկիրին լեզուին անտեղեակ են, պիտի կարգուի թուրք բանակին մէջ ծառայող եւրոպացի սպայ մը իբր օգնական:

Երկիրը խաղաղութիւն վերջ՝ Բ. Դուռը պարտի փոխել ազգաբնակչութեան ցեղային և լեզուական տարբերութեան համեմատ իր վիլայէթներու սահմանները:

Քրիստոնեաներու մուտքը դատարաններու մէջ ազատ պիտի ըլլայ:

Խռովութեանց միջոցին կատարուած սպաննութիւնները քննելու համար պիտի կազմուի քրիստոնեաներէ և մահմէտականներէ խառն յանձնախումբ մը:

Թուրք կառավարութիւնը պարտի վերաշինել կործանուած գիւղերը, տուները, դպրոցները և եկեղեցիները: Հոգալ դաղթականներու վերադարձի մասին, յատկացնելով անոնց դրամական օգնութիւն: Այս նպատակներուն գործածելու համար Բ. Դուռը պարտի պետութեանց տրամադրութեան տակ զնել գումար մը, որոնք պիտի հսկեն բաժանմանց և վերաշինութեանց վրայ:

Կործանուած տեղօրայք ամբողջ ոտքի մը տուրքերու վճարումէն ազատ պիտի հռչակուին: Օսմանեան պետութիւնը պարտի այս բոլորը և յետոյ հարկաւոր դատուած բարենորոգումները ընդունիլ և գործադրել անյապաղ կերպով:

Որովհետեւ երկրորդ աստիճանի բեւեռները և պաշիպօզուքները խառնակութեանց միջոցին գործած են անգլութիւններ, Դուռը պարտի առաջինները արձակել, երկրորդներուն կազմութիւնը արգելիլ:

Ահա՛ այս է Մակեդոնիոյ նոր ծրագիրը իր խոշոր կէտերով, որ կոչուած է խաղաղեցնել զժբաղդ երկիրը:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կիմանանք որ Վառնայի թաղական Խորհուրդը պատրաստել է վստահ ընտրութեանց համար հոգաբարձուական թիկնածուներու ցանկ մը, որը ահա:

Պ. Պ. Յովակիմ Թովմասեան, Յովհաննէս Գոյալուստէ, Սարգիս Մուրատեան, Փիլիպոս Հալաճեան, Գրիգոր Թօսպըյրբեան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Արտաքին գործոց նախարարութեան պաշտօնեաներէն Յուսատ և Ալիֆուատ, որոնք արտասահման փախած են, ի բացակայութեան դատապարտուեցան ծանր պատիժներու:

—Վեց եւրոպացի սպաներ Սելանիկ հասած են Մակեդոնիոյ ոստիկանութիւնը կազմակերպելու համար: Ասոնցմէ իւրաքանչիւրը պիտի ստանայ տարեկան մինչեւ 19,300 ֆր. գանձելի օսմանեան պանքէն:

—Անգլիական ընկերութիւն մը Մակեդոնիա մեկնած է՝ կարօտեալներու և վիրաւորներու օգնելու համար:

—Բ. Դուռը Աւստրիոյ և Լուսիոյ դեսպաններուն յայտնեց, որ թրքական ծառայութեան մէջ գրնուող 4 ֆրանսացի և գերմանացի սպաներ Մակեդոնիա լրկուած են զինուորական ատեանին վրայ հսկելու համար:

ՌՈՒՍԻԱ

Թիֆլիզէն «Սօֆ Վէր» թերթին կը հեռագրուի, որ սպաննութեան փորձ եղած է կովկասի կառավարչապետ իշխան Գալիցիի վրայ: Ահաբեկիչները հոգի յարձակած են իշխանին կառքին վրայ ու դաշոյններով վիրաւորած անոր գլուխը փախած ատեն իրենք գնդակահար եղած են:

Իշխանը չէ մեռած: Մենք կը ցանկայինք, որ այս փորձը վերջ մը գնդ հայայիք գազանի աւաղակային կեանքին:

—Բեթերսպուրկի և Մոսկուայի ուսանողները յառաջ բերած են հակակառավարական շարժում և հանած են խռովութիւններ:

ՍԵՐՊԻԱ

Տեղի ունեցան ազմկալի ինտեր: Արմատագանները տարին յաղթանակը, ինչ որ թագաւորին այնքան ալ հաճելի չէր:

Отговорникъ  
Мурадъ-Ераносянъ  
Педатничъ „Взаимность“ Варна